Սայաթ Նովա

Աշխարումս ախ չիմ քաշի

Աշխարհումը ա՛խ չիմ քաշի, քանի վուր ջա՛ն իս ինձ ամա.
Անմահական ջրրով լիքըն օսկէ փընջան իս ինձ ամա.
Ելստիմ՝ վըրէս շըվաք անիս՝ զարբաբ վըրան իս ինձ ամա.
Սուչս իմա՛ցի, է՛նէնց սպանէ՝ սուլթան ու խան իս ինձ ամա:

Մէջքըդ՝ սալբու-չինարի պէս, ռանգըդ փըռանգի ատլաս է,
Լիզուդ՝ շաքար, պըռօշըդ՝ դանդ, ակռէքըդ մարգրիտ, ալմաս է.
Օսկու մէջըն մինա արած, աչքիրըդ ակնակապ թաս է.
Պատուական անգին ջավահիր, լալ-բադէշխան իս ինձ ամա:

Յիս էս դարդին վո՞ւնց դիմանամ, մակա՞մ սիրտըս ունիմ քարած.
Արտա՛սունքս արուն շինեցիր, խիլքըն գըլխէս ունիմ տարած,
Նուր բաղ իս՝ նուր բաղչի մէջըն՝ բոլորքըդ վարթով չափարած.
Վըրէդ շուռ գամ բըլբուլի պէս՝ սիրով սէյրան իս ինձ ամա:

Քու էշխըն ինձի մաստ արաւ. յիս զարթուն իմ, սիրտս է քընած.
Աշխարհս աշխարհով կըշտացաւ, իմ սիրտըս քիզնից սով մընաց.
Յա՛ր, քիզ ինչո՞վ թարիփ անիմ՝ աշխարհումը բա՛ն չըմընաց.
Կրա՛կէ, ծովէմէն դուս էկած ռաշ ու ջէյրան իս ինձ ամա:

Ի՞նչ կու'լի՝ մէկ հիդրս խօսիս, թէվուր Սայաթ-Նովու եար իս.
Շուղքըդ աշխարհըս բռընիլ է՝ արեգագի դէմըն փար իս.
Հուտով հիլ, միխակ, դարիչին, վարթ, մանիշակ, սուսանբար իս,

Կարմրբրագուն՝ դաշտի ծաղիկ, հովտաց շուշան իս ինձ ամա: